



TK&PARTNERS

WEEKLY CLIENT ALERTS N 16

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**
- 2. ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ**
- 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ**
- 4. ԳԱՌՆՈՒ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐ**

#YourSupportTeam



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԶԵՉՈՔԱՑՄԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

ՀՀ կառավարության կողմից 18.06.2020 թվականին կայացած նիստի ընթացքում ընդունվել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառման փաթեթը: Միջոցառման թիրախում են գտնվում կորոնավիրուսի տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտները: Մասնավորապես նախաստեղծվում է ֆինասական աջակցություն տրամադրել այս ոլորտներում (հյուրանոցային ծառայություններ, հանրային սննդի ծառայություններ, զբոսաշրջային ծառայություններ, նախադպրոցական կրթություն, սպորտի բնագավառում գործունեություն, զվարճությունների կազմակերպման ծառայություններ, կինոթատրոններ, լուսանկարչություն, ավտոմեքենաների վարձույթ, կրթական գործունեություն, մշակույթի, երաժշտության, սպորտի, պարի բնագավառում գործունեություն, արվեստի ոլորտում գործունեություն, խաղատներ) գործունեություն ծավալող անհատ ձեռնարկատերերին, վարձու աշխատողներին ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին:

Աջակցությունը տրամադրվում է միանվագ՝ նվազագույն աշխատավարձի չափով (68,000 ՀՀ դրամ):

Ավելին՝ [հղումով](#):



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ



ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

2020 թ. հունիսի 16-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցնել 0.5 տոկոսային կետով՝ այն սահմանելով 4.5%:

Ավելին՝ [հղումով](#):

ԼԻԶԵՆԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 11-ին շրջանառված՝ Հաճախորդի շաբաթական ահազանգում մենք անդրադարձ ենք կատարել լիզինգի ինստիտուտի սպասվող փոփոխություններին, մասնավորապես՝ *հետադարձ լիզինգ* և *երկրորդային լիզինգ* հասկացությունների ներդրմանը: Հունիսի 18-ին օրենսդրական փաթեթն ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:

Ավելին՝ [հղումով](#), [հղումով](#), [հղումով](#), [հղումով](#), [հղումով](#) և [հղումով](#):





ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

**ՃԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նախագծով առաջարկվում է շահութահարկ վճարողներին ազատել 2020 թվականի 2-րդ եռամսյակի համար շահութահարկի կանխավճարների կատարումից, որի վերջնաժամկետը սույն թվականի հունիսի 20-է: Նախատեսվում է վերանայել շահութահարկի կանխավճարների համակարգը: Այսուհետև այլընտրանքային եղանակով վճարում կատարելու համար անհրաժեշտություն չի առաջանալու մինչև տվյալ տարվա մարտի 20-ը ներկայացնել հայտարարություն:

Յուրաքանչյուր եռամսյակի կանխավճարը կատարվելու է նախորդ տարվա շահութահարկի գումարի 20%-ի և նախորդ եռամսյակի իրացման շրջանառության 2%-ի գումարներից նվազագույնի չափով: Օրենքի փոփոխության նախագիծը ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:

Ավելին՝ [հղումով](#):

#YourSupportTeam



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ԳԱՌՆՈՒ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐԸ



Գառնու հեթանոսական տաճարը ենթադրաբար կառուցվել է մ.թ. 77 թվականին: Այն գտնվում է Հայաստանի Կոտայքի մարզում՝ Ազատ գետի ձախափին: Տաճարը նվիրված էր Միհր Աստծուն՝ հայոց դիցարանում լույսի և արևի աստվածը:

Հայտնաբերված հունական արձանագրության համաձայն, այն հիմնադրվել է Հայոց թագավոր Տրդատ I-ի կողմից:


Գառնու տաճարը միակ հեթանոսական և հունահռոմեական կառույցն է, որը

պահպանվել է Հայաստանի տարածքում: Ենթադրվում է, որ Գառնին մնացել է կանգուն, քանի որ այն լայնորեն ճանաչված էր որպես «արվեստի գլուխգործոց»: Տաճարը կառուցված է մոխրագույն բազալտից: Այն կանգնած է իոնական կարգի քսանչորս՝ 6.54 մետր բարձրության սյուների վրա: Առջևի և հետևի սյուները վեցն են, երկու կողմերինը՝ ութական: 24 սյունները խորհրդանշում են օրվա 24 ժամերը:

Տաճարի սանդուղքն ունի ինը 30 սանտիմետր բարձրություն ունեցող աստիճաններ: Սանդուղքի երկու կողմերում քառակուսի պատվանդաններ են, որոնց վրա փորագրված է Ատլասի՝ հունական դիցաբանության տիտանի քանդակը, որը կարծես իր ուսերի վրա է պահում ամբողջ կառույցը:

Համալիրը ներառել է հռոմեական բաղնիք, արքունական ամառանոց և 7-րդ դարի եկեղեցի: Պահպանվել է բաղնիքի խճանկարով հատակը, որը կազմված է 15 գույնի բնական քարերով:





Խճանկարի վերևի մասում գրված է՝ «ոչինչ չստանալով աշխատեցինք» արտահայտությունը:

1679 թվականին տեղի ունեցած երկրաշարժը ամբողջությամբ ավերել է տաճարը: Կործանված տաճարի մասերը, սյուների կտորներն ու պատերի քարերը, խոյակներն ընկած էին տաճարի շուրջը և հարևան ձորում: Հնագետներին պահանջվել է ավելի քան 20 տարի, որպեսզի քանդված կտորները հավաքեն:

Տաճարի վերակառուցումն ավարտվել է 1975 թվականին՝ երկրաշարժից գրեթե 300 տարի անց: Տաճարը ամբողջությամբ վերակառուցվել է՝ օգտագործելով բնօրինակ քարեր: Անհայտ կորած կտորները փոխարինվել են դատարկ քարերով, որպեսզի դրանք հեշտությամբ ճանաչելի լինեն:

[Աղբյուրը](#)
[Կատարեք վիբրտուսկ շրջայց](#)



©Vardan Petrosyan

#YourSupportTeam



IFLR1000

Chambers
AND PARTNERS